

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված՝ քաղաքացիական ծառայության միասնական պետական քաղաքականության վարման, քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման լիազորությունների շրջանակներում 2016 թվականի ընթացքում ապահովել է գործունեության հետևյալ հիմնական արդյունքները:

Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը լրացվել է 1435 պաշտոնով, անվանացանկից հանվել է 1276 պաշտոն: Իսկ քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկը լրացվել է 192 պաշտոնով, այդ անվանացանկից հանվել է 159 պաշտոն:

Խորհուրդը համաձայնություն է տվել քաղաքացիական ծառայության 3584 պաշտոնի անձնագրի փոփոխմանը և նորերի հաստատմանը, վարել 6709 քաղաքացիական ծառայողի գրանցամատյան:

Քաղաքացիական ծառայության 24 բարձրագույն, 466 գլխավոր, և Խորհրդի աշխատակազմի 4 կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար նախապատրաստվել և հրապարակվել է թվով 39 հայտարարություն: Քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր և առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կազմակերպվել է 490 մրցույթ, որոնց դիմել է 1320 քաղաքացի, այդ թվում մրցույթներին փաստացի մասնակցել է 745 քաղաքացի: Խորհրդի աշխատակազմի 4 կրտսեր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար դիմել է 29 քաղաքացի:

Հաշվետու ժամանակաշրջանում Խորհուրդը կազմակերպել է բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների 171 ատեստավորում, որոնց մասնակցել է 802 քաղաքացիական ծառայող:

Հանձինս իր շուրջ 18 ներկայացուցչի՝ մասնակցել է քաղաքացիական ծառայության առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու մրցույթներ անցկացնելու համար ստեղծված 288 մրցութային հանձնաժողովի, ինչպես նաև առաջատար և կրտսեր պաշտոն զբաղեցնող 942 քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու համար ստեղծված 173 ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին: Վերոնշյալ մրցույթներին մասնակցել է 619 քաղաքացի:

4 փուլով կազմակերպել է կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու թեստավորմանը մասնակցելու համար 1447 քաղաքացու դիմումների ընդունման և ըստ թեստավորման անցկացման ժամանակացույցի՝ 64 խմբերով նրանց թեստավորման իրականացումը: Կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր ստանալու թեստավորմանը փաստացի մասնակցել է 1126 դիմորդ: 207 քաղաքացու տրամադրվել է քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու հավաստագիր:

Քննության է առնվել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և քաղաքացիական ծառայողների ատեստավորումների արդյունքների 12 բողոք:

Խորհուրդը հաստատել է վերապատրաստման 28 ծրագիր՝ ըստ քաղաքացիական ծառայողների պաշտոնների խմբերի՝ վերապատրաստման գործընթացում ընդգրկելով 10 վերապատրաստողի: Հաստատված վերապատրաստման ծրագրերով կազմակերպել է 1821 քաղաքացիական ծառայողի վերապատրաստում:

2016թ. ընթացքում քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվել է 138, այդ ռեզերվից հանվել 111 քաղաքացիական ծառայող, իսկ երկարաժամկետ ռեզերվում գրանցվել է 132 և այդ ռեզերվից հանվել 120 քաղաքացի:

Ժամկետային աշխատանքային պայմանագրով քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններ է ներկայացվել քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված 48 քաղաքացիական ծառայողի, կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցված 46 քաղաքացու, ինչպես նաև քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու գործող հավաստագիր ունեցող 10 քաղաքացու թեկնածություն:

Համաձայնություն է տրվել մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով 1 քաղաքացիական ծառայողի մեկ տարուց ավելի ժամկետով գործուղմանը, 94 քաղաքացիական ծառայողի 65 տարին լրանալուց հետո մինչև մեկ տարի ժամկետով իրենց պաշտոնը զբաղեցնելը շարունակելուն, քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվից ժամկետային աշխատանքային պայմանագրով քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող 57 քաղաքացու կողմից այդ պաշտոններն արտամրցութային կարգով զբաղեցնելուն, 2 դիվանագիտական ծառայողի քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելուն:

Նախորդ տարվա ընթացքում քաղաքացիական ծառայության համակարգի 8 մարմիններում Խորհուրդն իրականացրել է 8 ուսումնասիրություն, 7 ծառայողական քննություն, որոնց արդյունքում համաձայնություն է տվել 1 քաղաքացիական ծառայողի նկատմամբ «զբաղեցրած պաշտոնից ազատում» կարգապահական տույժը կիրառելուն: Քաղաքացիական ծառայության հարցերով Խորհուրդը ներգրավվել է 10 դատական գործընթացում: 2016թ.-ին ընդունել է 7 նորմատիվ և 1115 անհատական որոշում:

Քաղաքացիական ծառայության համակարգի մարմիններին, ըստ անհրաժեշտության, գրավոր և բանավոր տրամադրվել են ուղեցույցներ, տրվել բազմաթիվ մեթոդական պարզաբանումներ, տարբեր խնդիրների լուծման համատեքստում անցկացվել սեմինար-խորհրդակցություններ:

Խորհուրդը քաղաքացիական ծառայության միասնական պետական քաղաքականությունն իրականացնում է՝ համագործակցելով քաղաքացիական ծառայության համակարգի բոլոր 47 մարմինների՝ ՀՀ Նախագահի, ՀՀ Կառավարության, հանրապետական գործադիր մարմինների, նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական մարմինների,

մարզպետարանների, օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների աշխատակազմերի հետ:

2016թ. Խորհրդի գործունեության մեջ ևս, ինչպես նախորդ տարիներին, առանձնահատուկ տեղ է գրավել գիտական և ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը, որն արտահայտվում է քաղաքացիական ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացներում ներգրավվածությամբ:

Իր լիազորություններն արդյունավետ իրացնելու, քաղաքացիական ծառայության համակարգի կառավարման զարգացումն ապահովելու նպատակով Խորհուրդը շարունակել է համագործակցել մի շարք միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների համանման կառույցների հետ: Մասնավորապես 2016 թվականի ընթացքում Խորհուրդն ապահովել է Ուկրաինայի քաղաքացիական ծառայության գլխավոր վարչության և Ամերիկյան խորհուրդների հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության աշխատանքները: Ներգրավվել է ԵՄ Արևելյան գործընկերության ժողովրդավարության, արդյունավետ կառավարման և կայունության հարթակի հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում կազմակերպված հանդիպումներին և աշխատաժողովներին: ԵՄ ու ՏՀԶԿ (OECD) համատեղ նախաձեռնությունը հանդիսացող SIGMA ծրագրի փորձագիտական խմբի հետ շարունակել է Հայաստանի քաղաքացիական ծառայության համակարգի բարեփոխումների շրջանակներում մշակվող «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը հանրային կառավարման եվրոպական սկզբունքներին համահունչ նախագծելուն ուղղված աշխատանքները: Մինևույն ժամանակ աշխատանքներ են տարվել «Աջակցություն Հայաստանում քաղաքացիական ծառայության բարեփոխումներին» ԵՄ տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում գործող միջազգային ու տեղացի փորձագետների և Խորհրդի միջև համագործակցության ուղղությամբ: Համաշխարհային բանկի հետ միասին գործունեություն է ծավալվել Հայաստանի «Պետական հատվածի արդիականացման» ծրագրի շրջանակներում քաղաքացիական ծառայողների հեռավար ուսուցման համակարգի ներդրման նպատակով: Իսկ քաղաքացիական ծառայողների հեռավար ուսուցման համակարգում վերապատրաստման նոր ծրագրեր ու մոդուլներ ներմուծելու համար համագործակցություն է ծավալվել ՄԱԿ-ի ասիական և խաղաղօվկիանոսյան երկրների Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման վերապատրաստման կենտրոնի (UN-APCICT/ESCAP) հետ: Խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել Ղազախստանի Հանրապետության մայրաքաղաք Աստանայում տեղակայված՝ քաղաքացիական ծառայության ոլորտում տարածաշրջանային խմբի շրջանակում ոլորտի զարգացման միտումներին ուղղված մի շարք ուսումնասիրություններին և միջոցառումներին:

2016 թվականի ընթացքում Խորհուրդն ակտիվորեն լուսաբանել է իր գործունեությունը, խրախուսել քաղաքացիական ծառայության համակարգի հրապարակայնության ու թափանցիկության ապահովումը: Իր լիազորությունների,

գործառույթների իրականացման հետ կապված էական խոչընդոտների, անլուծելի հիմնախնդիրների էտրիուրդը չի բախվել: